



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2016 թվականի N 906 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի N 7 դպրոցի մարզադահլիճի տանիքի, վնասված պատուհանների և դռների վերանորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին 2016 թվականի ինն ամսում հատկացնել 15,000.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (որից՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ 14,475.0 հազ. դրամ, «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածով՝ 525,0 հազ. դրամ):

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի նոր կառուցվող մարզադպրոցի տարածքում ֆուտբոլի մարզադաշտի և վազքուղու կառուց-

ման նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին 2016 թվականի ինն ամսում հատկացնել 20,000.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (որից՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով՝ 19,300.0 հազ. դրամ, «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածով՝ 700.0 հազ. դրամ):

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման NN 11 և 12 հավելվածներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. սեպտեմբերի 6
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.52 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

1.4. Ներդրումներ լիազոր կառավարման ներքո գտնվող պետական կազմակերպություններում

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
		ոչ ֆինանսական ցուցանիշներ		ֆինանսական ցուցանիշներ	
		ինն ամիս	տարի	ինն ամիս	տարի
Ծրագրային դասիչը		<u>Անվանումը</u> Ներդրումներ կրթական ոլորտի օբյեկտներում (ՀՀ Արմավիրի մարզ)			
1146	ԵԿ07	<u>Նկարագրությունը</u> ՀՀ Արմավիրի մարզպետի ենթակայության հանրակրթական դպրոցների շենքերի (մասնաշենքերի) հիմնանորոգում (համաշինարարական աշխատանքներ, ջեռուցման համակարգի իրականացում, ներքին հարդարում, տարածքի բարեկարգում)			
Ծախսերը (հազ. դրամ)				15000.0	15000.0
Կազմակերպությունը, որտեղ կատարվում է ներդրումը					
ՀՀ Արմավիրի մարզպետի ենթակայության հանրակրթական դպրոց					
Ներդրման հիմնավորումը, մասնավորապես, ազդեցությունը կարողությունների վրա՝					
Քանակական, որակա- կան, ժամկետայնու- թյան և այլ չափորոշիչ- ների փոփոխության վրա	Գործող կրթական օբյեկտների շենքերի (մասնաշենքերի) կապիտալ վերանորոգումն անհրաժեշտ է, որպեսզի կրթական ծառայությունների մատուցումն իրականացվի կրթական չափորոշիչներով սահմանված քանակական, որակական և ժամկետային ցուցանիշներին համապատասխան				
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը					

1146 Հանրակրթության ծրագիր					
<i>Վերջնական արդյունքի նկարագրությունը</i>					
Հանրակրթական մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում					
1.2. Տրանսֆերտներ					
<i>Ծրագրային դասիչը</i>		<u>Անվանումը</u>			
		Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար			
1163	ԾՏ11	<u>Նկարագրությունը</u>			
		ՀՀ Արմավիրի մարզի համայնքային ենթակայության մարզական հաստատությունների վերանորոգում և կառուցում			
Շահառուների քանակը		Համայնքների թիվը, որտեղ կատարվում են ներդրումները	1	1	
Գումարը (հազ. դրամ)			X	X	20,000.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը					
<u>Շահառուների ընտրության չափանիշները</u>					
ՀՀ համայնքների ենթակայության մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն					
<i>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</i>					
1163 Մանկապատանեկան և մասսայական սպորտի ծրագիր					
<i>Վերջնական արդյունքի նկարագրությունը</i>					
Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում					

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Արմավիրի մարզպետարան

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառնական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) ՀՀ 2016 թ. պետական բյուջե (հազ. դրամ)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը/խումբը/դասը)		
1146			ԾՐԱԳԻՐ	
			Հանրակրթության ծրագիր	15,000.0
			<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
			Տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծառայությունների մատուցում	
			<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>	
			Հանրակրթական մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում	
			Պետական կազմակերպություններում ներդրումներ	
	ԵԿ07		Ներդրումներ կրթական ոլորտի օբյեկտներում: Կրթական օբյեկտների շինարարություն (ՀՀ Արմավիրի մարզ)	15,000.0
			<u>Ակտիվի նկարագրությունը</u>	
			ՀՀ Արմավիրի մարզպետի ենթակայության հանրակրթական դպրոցների շենքերի (մասնաշենքերի) հիմնանորոգում (համաշինարարական աշխատանքներ, ջեռուցման համակարգի իրականացում, ներքին հարդարում, տարածքի բարեկարգում)	

		<u>Կազմակերպության անվանումը, որտեղ կատարվում է ներդրումը</u>	
		ՀՀ Արմավիրի մարզպետի ենթակայության հանրակրթական դպրոցներ	
		<u>Տվյալ ներդրման հետ կապված ծրագիրը (ծրագրերը)</u>	
		1146. Հանրակրթության ծրագիր	
1163		ԾՐԱԳԻՐ	
		Մանկապատանեկան և մասսայական սպորտի ծրագիր	20,000.0
		<u>Ծրագրի նկարագրությունը</u>	
		Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչության և առողջ ապրելակերպի արմատավորմանն ուղղված միջոցառումների իրականացում, հանրապետական մակարդակով տարբեր մարզական խաղերի և փառատոների կազմակերպում և անցկացում	
		<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u>	
		Բնակչության առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ապահովում	
		Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ԾՏ11	Աջակցություն համայնքներին մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար	20,000.0
		<u>Տրանսֆերտի նկարագրությունը</u>	
		ՀՀ Արմավիրի մարզի համայնքային ենթակայության մարզական հաստատությունների վերանորոգում և կառուցում	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Կողմը	Անվանումը	Գնման ձևը	Չափի միավորը	Միավորի գինը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)	
					քանակը	գումարը (հազ. դրամ)
ՀՀ Արմավիրի մարզպետարան						
Բաժին N 11, Խումբ N 01, Դաս N 01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ						35,000.0
ՄԱՍ II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						32,896.9
45611300-1	Այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում	ԲԸՀ	դրամ	14098700	1	14,098.7
45221142-1	Ընդհանուր շինարարական աշխատանքներ	ԲԸՀ	դրամ	18798200	1	18,798.2
ՄԱՍ III. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ						2,103.2
98111140-1	Հեղինակային հսկողության ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	86900	1	86.9
71351540-1	Տեխնիկական հսկողության ծառայություններ	ԲԸՀ	դրամ	289500	1	289.5
71241200-1	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ԲԸԱՀ	դրամ	1225000	1	1,225.0
98111140-2	Հեղինակային հսկողության ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	115800	1	115.8
71351540-2	Տեխնիկական հսկողության ծառայություններ	ԲԸՀ	դրամ	386000	1	386.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ